

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՋԵՌԱՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**



**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Կ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ**

**ԱԶԲ -2. ԱՐՄԱԿԻՐԻ ՍԱՐՋԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

**Լ ԵՆթածրագիր, փաթեթ 3** - Սուսալեռ, Շահունյան, **Շահունյան Թ/Ֆ**, Պտղունք, Նորակերտ գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավում



Ֆինանսավորող կազմակերպություն՝  
Պատվիրատու՝  
Խորհրդատվական կազմակերպություն՝

Ասիական Ջարգացման Բանկ  
«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ  
ՀԳՇՆ ՍՊԸ - ՋԻՆՋ ՍՊԸ

**Երևան 2014 թ**

ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող «Զրամատակարարման և Զրահեռացման (ԶՏ) սեկտորի ծրագիր - լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիրը ներառում է 10 ենթածրագիր և ընդգրկում է Հայաստանի 10 մարզերի շուրջ 110 բնակավայրեր (18 քաղաքներ և 92 գյուղեր):

Ծրագրի նպատակն է ընտրված համայնքներում բարելավել առկա ջրամատակարարման համակարգերը, ինչպես նաև ծառայությունների մակարդակը:

«Զրամատակարարման և Զրահեռացման (ԶՏ) սեկտորի ծրագիր - լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիրը բաղկացած է 2 բաղադրիչից. Ա բաղադրիչ - «Համայնքային ենթակառուցվածքների վերականգնում և բարելավում», Բ բաղադրիչ - «Կառավարման բարելավում և կարողությունների զարգացում»:

Ա բաղադրիչն անդրադառնում է գոյություն ունեցող ջրամատակարարման ենթակառուցվածքների բարելավմանը, ինչը ներառում է մոտ 600.0կմ մայր ջրատարների և բաշխիչ ցանցերի վերականգնում, մոտ 110000 գոյություն ունեցող և նոր տնային տնտեսությունների ջրագծերի միացում ցանցին, 5 պոմպակայանների և 3 քլորակայանների, ջրի մաքրման մեկ կայանի, օրվա կարգավորման 15 ջրամբարների վերանորոգում, ինչպես նաև մոտ 20000 ջրաչափերի տեղադրում՝ հասարակական օբյեկտների և անհատ սպառողների համար:

Բ բաղադրիչն անդրադառնում է «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ գործառնական և կառավարման հետագա բարելավմանը, ինչպես նաև հանրության իրազեկման բարձրացմանը: Հանրային իրազեկման քարոզարշավ նախատեսվում է ծրագրում ընդգրկված բոլոր համայնքներում, որի ժամանակ շահագրգիռ բնակչությանը կտրամադրվի տեղեկատվություն ծրագրի իրականացման տարբեր ասպեկտների վերաբերյալ՝ ներառյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության, սոցիալական, գենդերային և անվտանգության միջոցառումները:

Յուրաքանչյուր ենթածրագրի շրջանակներում խորհրդատվական կազմակերպությունն իրականացրել է նախագծային աշխատանքներ, որոնց մեջ բացի նախնական և աշխատանքային նախագծերի մշակումից, ԱԶԲ-ի պահանջով, ներառվել են նաև շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական, տարաբնակեցման և գենդերային հետազոտություններ, տարաբնակեցման, սոցիալական, գենդերային հարցեր և հանրային իրազեկման արշավ:

**Բնապահպանական հարցեր** - ծրագրի նախագծային փուլում իրականացվել է շրջակա միջավայրի ուսումնասիրություն և յուրաքանչյուր ենթածրագրի համար մշակվել է տեղանքին բնորոշ «Շրջակա միջավայրի կառավարման պլան»: ՇՄԿՊ-ի մեջ ներառվել են ազդեցությունը մեղմացնող միջոցառումներ, որոնց կատարումը շինարարական աշխատանքների ժամանակ պետք է պարտադիր վերահսկվի տեխնիկական վերահսկող թիմի և «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ի համապատասխան մասնագետների կողմից:

**Սոցիոլոգիական հարցումներ** իրականացվում են 2 փուլով՝ նախագծման ընթացքում և շինարարական աշխատանքների ավարտից հետո: Հարցումներն անցկացվում են հատուկ մշակված հարցաշարի միջոցով: 1-ին փուլի

հարցումների իրականացման ժամանակ բացահայտվել է համայնքներում առկա ջրամատակարարման վիճակն ու գոյություն ունեցող խնդիրները, ՁՁ համակարգերի բարելաված ծառայությունների դիմաց վճարելու պատրաստակամությունը: 2-րդ փուլում հնարավոր կլինի բացահայտել նաև տվյալ ծրագրի իրականացման արդյունքները և բնակչության բավարարվածությունը ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներով:

**Գեներային հարցեր** – ծրագրում հատուկ ուշադրություն է հատկացվում կանանց մասնակցության հարցերին: Կանանց մասնակցությունը խրախուսվում է ինչպես խորհրդատվական կազմակերպությունների թիմում աշխատելու, այնպես էլ ծրագրի արդյունքում նրանց առողջական և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման հարցերում: Հանրային իրազեկման քարոզարշավների ընթացքում հնարավորինս ներգրավվում են կանայք՝ որպես ծրագրի օգուտների վերաբերյալ հասարակական իրազեկության բարձրացման խթանողներ: Ծրագրով նախատեսվում է շահագրգիռ կանանց շրջանակներում բացահայտել հիմնական խնդիրները և հրատարակել տեղեկատվական պաստառներ՝ հանրային վայրերում տարածելու նպատակով:

**Տարաբնակեցման հարցեր** – ընդհանուր ենթածրագրի նախնական ուսումնասիրության ժամանակ բացահայտվել է, որ նախագծային և շինարարական փուլում չեն առաջանա որևէ խնդիրներ բնակչության ֆիզիկական տարաբնակեցման վերաբերյալ, ինչպես նաև չեն ծագի նույնիսկ ժամանակավոր տարաբնակեցմանն առնչվող հարցեր, որոնք կպահանջեն փոխհատուցում: Յուրաքանչյուր ենթածրագրի համար կկատարվի առանձին նախնական ուսումնասիրություն՝ հողի ձեռքբերման և տարաբնակեցման (ՀՁՏ) հարցերի շրջանակների որոշման և հստակեցման վերաբերյալ:

**Հանրային իրազեկման քարոզարշավներ** նախատեսվում է անցկացնել ենթածրագրի բոլոր համայնքների բնակիչների և այլ շահառու կողմերի մասնակցությամբ /տեղական ՀԿ-ներ, իրավաբանական անձ բաժանորդներ և այլն/: Հանրային իրազեկման ընթացքում նախատեսվում է հնարավորինս սերտ համագործակցություն տեղերում գործող բնապահպանական տեղեկատվական կենտրոնների /Օրիուսի կենտրոններ/ և այլ համայնքահեն կազմակերպությունների հետ:

**I ենթածրագրով նախատեսվում է** բարելավել Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դոդս, Շահունյան, Շահունյան ԹՖ, Սուսալեռ, Նորակերտ, Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական, Աղավնատուն, Պտղունք գյուղերի ջրամատակարարման համակարգերը:

Բնակավայրերի ընտրությունը կատարվել է ըստ ԱԶԲ-ի կողմից ընդունված բնակավայրերի ընտրության չափանիշների՝

- ջրի մատչելիություն,
- ջրամատակարարման վիճակ (ջրամատակարարման գրաֆիկ, տևողություն, ջրի որակ, համակարգի տեխնիկական վիճակ),

- ջրահեռացման վիճակ,
- ցանցի տեխնիկական վիճակ,
- վարձավճարների ներկայիս հավաքագրման մակարդակ,
- բնակչության վճարունակություն և վճարման պատրաստականություն,
- համայնքի ֆինանսական կայունություն:

Ենթաձեռագրի համայնքներում խմելու ջրամատակարարումն իրականացվում է վթարային, ոչ բարվոք վիճակում գտնվող ներքին ցանցերի միջոցով: Ձգալի չափերի են հասնում հոսակորուստները, լիարժեք չի կատարվում նաև համակարգում ջրի սպառման հաշվառումը:

Վերը նշված ենթաձեռագրի համար մշակվել են նախնական և աշխատանքային նախագծերը, որոնք ներառում են փաստաթղթային ուսումնասիրություններ, բնակչության և ջրապահանջի կանխատեսումներ, առկա իրավիճակի գնահատում, առկա խնդիրների և թերությունների, մինչև 2040թ. ջրամատակարարման պահանջարկի վերլուծություն, շրջակա միջավայրի նախնական գնում և ՇՄԿՊ-ի մշակում, հանրային իրազեկում, սոցիալական, տարաբնակեցման և գեղեցիկ ուսումնասիրություններ, որոնց հիման վրա մշակվել են ՋՋ համակարգերի բարելավման առաջարկներ: Առաջարկների ֆինանսական վերլուծության հիման վրա կատարվել են ներդրումային գնահատումներ:

### ***Շահունյան ԹՖ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքներ***

#### **Ներքին ջրամատակարարման համակարգ**

- 63-110մմ տրամագծերի 3.1կմ պոլիէթիլենե ջրագծերի կառուցում
- 50-100մմ տրամագծերի թվով 7 թաղված տեղադրման փականային հանգույցների կառուցում
- 2.1կմ ընդհանուր երկարությամբ 20-32մմ տրամագծերի պոլիէթիլենե խողովակներով մուտքագծերի կառուցում անհատական տների համար՝ 180 ջրաչափական հորերի տեղադրմամբ:

#### **Ծրագրի կոնտակտներ՝**

ՀՋԿ ՓԲԸ Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն, հեռ: 010 542877

Բաժանորդների սպասարկման կենտրոն – 1 71

Ջրաչափի ցուցմունքը կարճ հաղորդագրության տեսքով – 81 71